ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 2
ԿՇՄՊ-ԳՀԱՊՁԲ-20/2 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ
ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 29.01.2020թ.

29.01.2020-05.02.2020թթ., ՀՀ, ք. Երևան, Փ. Բուզանդի 1/3 հասցեում գտնվող «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի շենքում տեղի ունեցավ գրենական պիտույքների և գրասենյակային նյութերի ձեռքբերման ԿՇՄՊ-ԳՀԱՊՁԲ-20/2 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը: Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի հետևյալ անդամները.

| | |
|---|---|
| Հ. Հովհաննիսյան՝ | «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի տնօրենի տեղակալ, |
| Ա. Աղաբեկյան՝ | «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի Հասարակության հետ կապերի բաժնի օպերատոր, |
| Ա. Սարգսյան՝ | «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի Կադրերի բաժնի կադրերի մասնագետ: |

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Հ. Հովհաննիսյանը: Հանձնաժողովի նիստին ներկա էր Հանձնաժողովի քարտուղար Մ. Ղազարյանը՝ «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի գնումների և նյութական ապահովման բաժնի պետը:

Հաշվի առնելով, որ Հանձնաժողովի կազմը բաղկացած է երեք անդամից, իսկ Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի բոլոր անդամները, հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի (այսուհետ՝ Կարգ) 26-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջների համաձայն Հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված:

## 1. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը որոշեց հաստատել Հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին:
2. Գնման հայտով սահմանված՝ Ընթացակարգի շրջանակում գնվելիք գնման առարկաների գների մասին:
3. Ընթացակարգին ներկայացված հայտեր պարունակող ծրարները գնահատելու մասին:
4. Բացված յուրաքանչյուր ծրարում պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայության և հրավերի պայմաններին համապատասխանության մասին:

5. Ընթացակարգի մասնակիցների առաջարկած գների, ընտրված և հաջորդաբար այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ տվյալների մասին:

6. Ընթացակարգի ընտրված մասնակիցներ հայտարարելու մասին:

7. Պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը հաստատելու և անգործության ժամկետ սահմանելու մասին:

8. Կատարված հարցումների, պարզաբանումների, հիմնավորումների և հրավերում կատարված փոփոխությունների, հակաօրինական գործողությունների, ներկայացված բողոքների մասին:

9. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին:

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

## 2. ԳՆՄԱՆ ՀԱՅՏՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ՝ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ԳՆՎԵԼԻՔ ԳՆՄԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ԳՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով ՀՀ Կառավարության 23.01.2020թ. «Աշխատանքային օրը տեղափոխելու մասին» N 42-Ն որոշումը և հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 4-րդ կետով սահմանված պահանջները՝ 2020թ.-ի հունվարի 29-ին, ՀՀ, ք. Երևան, Փ. Բուզանդի 1/3 հասցեում գտնվող «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի շենքում ժամը 10:00-ին նախագահը նիստը հայտարարեց բացված և տեղեկացրեց, որ գնման գործընթացն իրականացվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն և Ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների համար գնման հայտով գներ սահմանված չեն՝ Կարգի 21-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն:

| Հ/Հ | Գնման առարկայի անվանումը | Գնման հայտով սահմանված ընդհանուր գինը |
|---|---|---|
| 1 | Գրասեղանեղան 1 | - |
| 2 | Գրասեղանեղան 2 | - |
| 3 | Ղեկավարի սեղան | - |
| 4 | Գրապահարան 1 | - |
| 5 | Գրապահարան 2 | - |
| 6 | Գրասենյակային աթոռ 1 | - |
| 7 | Գրասենյակային աթոռ 2 | - |
| 8 | Ղեկավարի բազկաթոռ | - |

Հանձնաժողովի քարտուղարը հաղորդեց տեղեկատվություն գրանցամատյանում կատարված գրառումների մասին և Հանձնաժողովի նախագահին փոխանցեց հայտերի գրանցամատյանը, դրա անբաժանելի մասը հանդիսացող մյուս փաստաթղթերը և գրանցված հայտերը:

## 3. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԵՐ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ ԾՐԱՐՆԵՐԸ ԳՆԱՀԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայտ պարունակող ծրար կազմել և ներկայացրել են ներքոնշյալ մասնակիցները:

| Հ/Հ | Մասնակցի անվանումը | Մասնակցի վերաբերյալ տվյալներ |
|---|---|---|
| 1 | ԱՁ Դավիթ Հովհաննիսյան Հովհաննեսի | Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Կոմիտաս 56 բն. 46, հեռ.՝ 077-474006, Hovhannisyan8118@gmail.com |
| 2 | «Առկտուր» ՍՊԸ | Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Կոմիտասի 1/253, հեռ.՝ 010 268-480, 091416154, sss.arktour@gmail.com |
| 3 | «Ման Արթ» ՍՊԸ | Հասցե՝ ՀՀ, Արագածոտնի մարզ Ապարան համայնք Արագած 6-րդ փողոց 27 տուն, հեռ.՝ 093694029, manart1966@mail.ru |
| 4 | «Ատլանտ Էքստրա» ՍՊԸ | Հասցե՝ ՀՀ, Արարատի մարզ, գ. Արգավանդ երկաթգծի 1 փ., 9 տ., հեռ.՝ 099732161, 091300533, tender@megaoffice.am |
| 5 | «Դամկար» ՍՊԸ | Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Անդրանիկի 129, բն. 4, հեռ.՝ +37498989898, damkar777@mail.ru |

Հանձնաժողովը գնահատեց հայտ պարունակող ծրարները կազմելու և ներկայացնելու համապատասխանությունը սահմանված կարգին և արձանագրեց, որ մասնակցի կողմից ներկայացված ծրարները կազմված և ներկայացված են Ընթացակարգի հրավերով/ծանուցմամբ/ սահմանված պահանջներին համապատասխան և բացեց համապատասխանող գնահատված հայտերը:

Կողմ՝ 3, դեմ՝ 0:

## 4. ԲԱՑՎԱԾ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ԾՐԱՐՈՒՄ ՊԱՀԱՆՋՎՈՂ (ՆԱԽԱՏԵՍՎԱԾ) ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՐԱՎԵՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը գնահատեց բացված յուրաքանչյուր ծրարում պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայությունը և դրանց կազմման համապատասխանությունը հրավերով սահմանված վավերապայմաններին և արձանագրեց, որ.

1. ԱՁ Դավիթ Հովհաննիսյան Հովհաննեսի, «Առկտուր» ՍՊԸ-ի և «Դամկար» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ծրարներում Ընթացակարգի հրավերով/ծանուցմամբ/ պահանջված փաստաթղթերը առկա են և կազմված են սահմանված պահանջներին համապատասխան:
2. «Ման Արթ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ծրարում առկա փաստաթղթերի գնահատման արդյունքում գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվել են անհամապատասխանություններ հրավերի պահանջների նկատմամբ, մասնավորապես՝ Հավելված 2-ով ներկայացված գնային առաջարկում 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով գնման առարկաների անվանումները չեն համապատասխանում հրավերով սահմանված անվանումներին:

3. «Ատլանտ Էքստրա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ծրարում առկա փաստաթղթերի գնահատման արդյունքում գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվել են անհամապատասխանություններ հրավերի պահանջների նկատմամբ, մասնավորապես՝ Հավելված 1.1-ով 6-րդ, 7-րդ և 8-րդ չափաբաժինների մասով ներկայացված տեխնիկական բնութագրերը չեն համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին:

Կողմ՝ 3, դեմ՝ 0:

## 5. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԱՌԱՋԱՐԿԱԾ ԳՆԵՐԻ, ԸՆՏՐՎԱԾ ԵՎ ՀԱՋՈՐԴԱԲԱՐ ԱՅԼ ՏԵՂԵՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի նախագահը հայտարարեց հայտեր ներկայացրած մասնակիցների գնային առաջարկները՝ մեկ թվով արտահայտված, հիմք ընդունելով տառերով գրվածը:

ՀՀ դրամ

| Չափաբաժնի | | Մասնակցի անվանում | Մասնակիցների առաջարկած գները | | | |
|---|---|---|---|---|---|---|
| N | Անվանում | | Ինքնարժեք | Շահույթ | ԱԱՀ | Ընդհանուր գինը |
| 1 | Գրասեղանեղան 1 | ԱՁ Դավիթ Հովհաննիսյան Հովհաննեսի | 875000 | 625000 | 0 | 1500000 |
| | | «Առկտուր» ՍՊԸ | 913500 | 101500 | 203000 | 1218000 |
| | | «Դամկար» ՍՊԸ | 581250 | 43750 | 125000 | 750000 |
| 2 | Գրասեղանեղան 2 | ԱՁ Դավիթ Հովհաննիսյան Հովհաննեսի | 400000 | 300000 | 0 | 700000 |
| | | «Առկտուր» ՍՊԸ | 501525 | 55725 | 111450 | 668700 |
| | | «Դամկար» ՍՊԸ | 310333 | 23000 | 66667 | 400000 |
| 3 | Ղեկավարի սեղան | «Առկտուր» ՍՊԸ | 121500 | 13500 | 27000 | 162000 |
| | | «Դամկար» ՍՊԸ | 155666 | 11000 | 33334 | 200000 |
| 4 | Գրապահարան 1 | ԱՁ Դավիթ Հովհաննիսյան Հովհաննեսի | 525000 | 375000 | 0 | 900000 |
| | | «Առկտուր» ՍՊԸ | 935888 | 103987 | 207975 | 1247850 |
| | | «Ման Արթ» ՍՊԸ | 850000 | 93000 | 0 | 943000 |
| | | «Դամկար» ՍՊԸ | 581250 | 43750 | 125000 | 750000 |
| 5 | Գրապահարան 2 | ԱՁ Դավիթ Հովհաննիսյան Հովհաննեսի | 160000 | 120000 | 0 | 280000 |
| | | «Առկտուր» ՍՊԸ | 300870 | 33430 | 66860 | 401160 |
| | | «Ման Արթ» | 320000 | 31600 | 0 | 351600 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | ՍՊԸ | | | | |
| | | «Դամկար» ՍՊԸ | 247999 | 18667 | 53334 | 320000 |
| 6 | Գրասենյակային աթոռ 1 | «Առկտուր» ՍՊԸ | 307500 | 42500 | 70000 | 420000 |
| | | «Ատլանտ Էքստրա» ՍՊԸ | 325000 | 71000 | 79200 | 475200 |
| | | «Դամկար» ՍՊԸ | 348750 | 26250 | 75000 | 450000 |
| 7 | Գրասենյակային աթոռ 2 | «Առկտուր» ՍՊԸ | 375300 | 112200 | 97500 | 585000 |
| | | «Ատլանտ Էքստրա» ՍՊԸ | 420000 | 80000 | 100000 | 600000 |
| | | «Դամկար» ՍՊԸ | 325500 | 24500 | 70000 | 420000 |
| 8 | Ղեկավարի բազկաթոռ | «Ատլանտ Էքստրա» ՍՊԸ | 201000 | 36500 | 47500 | 285000 |
| | | «Դամկար» ՍՊԸ | 302250 | 22750 | 65000 | 390000 |

Կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովը որոշեց.

1. Ընդունել ի գիտություն ներկայացված տեղեկատվությունը,
2. նիստը կասեցնել 1 աշխատանքային օրով և առաջարկել «Ատլանտ Էքստրա» ՍՊԸ-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը՝ հիմք ընդունելով Կարգի 41-րդ կետով սահմանված պահանջները,
3. «Ման Արթ» ՍՊԸ-ի կողմից 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով ներկայացված գնային առաջարկները գնահատել անբավարար և մերժել վերջինիս հայտը տվյալ չափաբաժինների մասով:

Կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովը արձանագրեց, որ.

1. «Ատլանտ Էքստրա» ՍՊԸ-ի կողմից 30.01.2020թ. Ընթացակարգի քարտուղարի էլեկտրոնային հասցեին ներկայացվել է Հավելված 1.1-ում արձանագրված թերությունների շտկված տարբերակը՝ ստորագրված, կնքված և սկանավորված տարբերակով:

Կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովը որոշեց.

1. Կարգի 67-րդ կետի հիման վրա ՀՀ պետական եկամուտների կոմիտեի միջոցով մասնակցի՝ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետին բավարարելու մասին հայտով ներկայացված հավաստման իսկությունը չստուգել՝ պատճառաբանված որոշման բացակայության պատճառով:
2. Գնահատման թերթիկը լրացնել անմիջապես և հանձնել քարտուղարին:
3. Հիմք ընդունելով գնահատման թերթիկը՝ հաստատել գնահատման հետևյալ արդյունքները.

| Չ/Հ | Մասնակցի անվանումը | Գնահատման արդյունքը |
|---|---|---|

| | | |
|---|---|---|
| 1, 2, 4, 5 | ԱՁ Դավիթ Հովհաննիսյան Հովհաննեսի | բավարար |
| 1-7 | «Առկտուր» ՍՊԸ | բավարար |
| 1, 2 | «Ման Արթ» ՍՊԸ | անբավարար |
| 4, 5 | «Ման Արթ» ՍՊԸ | բավարար |
| 6, 7, 8 | «Ատլանտ Էքստրա» ՍՊԸ | բավարար |
| 1-8 | «Դամկար» ՍՊԸ | բավարար |

Կողմ՝ 3, դեմ՝ 0:

Քանի որ գնումն իրականացվում է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա՝ հանձնաժողովը որոշեց.

1. Հանձնաժողովի նիստը կասեցնել բավարար գնահատված մասնակիցների հետ գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման նպատակով:

2. Գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օր, ժամ և վայր սահմանել համապատասխանաբար՝ 05.02.2020թ. ժամը 10:00-ն, ՀՀ, ք. Երևան, Փ. Բուզանդի 1/3 հասցեում գտնվող «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի շենքում:

Կողմ՝ 3, դեմ՝ 0:

05.02.2020թ. կայացան գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունները: Բանակցություններին մասնակցում էին ԱՁ Դավիթ Հովհաննեսի Հովհաննիսյանը, «Առկտուր» ՍՊԸ-ի և «Դամկար» ՍՊԸ-ի ներկայացուցիչները: Հանձնաժողովի նախագահը յուրաքանչյուր մասնակցի՝ տվյալ պահին ներկայացրած գնային առաջարկը հրապարակեց մյուս մասնակիցների համար, և բանակցությունների համար սահմանեց ժամկետ՝ 15 րոպե տևողությամբ:

Բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետին մասնակցի կողմից ներկայացվեցին նոր գնային առաջարկներ, համապատասխանաբար.

- 4-րդ չափաբաժնի մասով «Դամկար» ՍՊԸ-ի նոր գնային առաջարկը առանց ԱԱՀ կազմեց 570000 ՀՀ դրամ, 5-րդ չափաբաժնի մասով՝ 220000 ՀՀ դրամ, 6-րդ չափաբաժնի մասով՝ 345000 ՀՀ դրամ,
- 4-րդ չափաբաժնի մասով ԱՁ Դավիթ Հովհաննեսի Հովհաննիսյանի նոր գնային առաջարկը կազմեց առանց ԱԱՀ 579000 ՀՀ դրամ, 5-րդ չափաբաժնի մասով՝ 215000 ՀՀ դրամ:

Մյուս չափաբաժինների մասով բանակցությունների վերջնաժամկետին նոր գնային առաջարկ չներկայացվեց:

Հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշեց և հայտարարեց ընտրված և հաջորդաբար այլ տեղեր զբաղեցրած մասնակիցներին.

ՀՀ դրամ

| Չափաբաժնի | | Մասնակցի | | Ընտրված մասնակցի դեպքում նշվում է "X" | Մասնակցի առաջարկած գինը /առանց ԱԱՀ/ |
|---|---|---|---|---|---|
| N | Անվանում | Զբաղեցրած տեղ | Անվանում | | |
| 1 | Գրասեղանեղան 1 | 1 | **«Դամկար» ՍՊԸ** | X | **625,000.00** |
| | | 2 | «Առկտուր» ՍՊԸ | | 1,015,000.00 |
| | | 3 | ԱՁ Դավիթ Հովհաննիսյան Հովհաննեսի | | 1,500,000.00 |
| 2 | Գրասեղանեղան 2 | 1 | **«Դամկար» ՍՊԸ** | X | **333,333.00** |
| | | 2 | «Առկտուր» ՍՊԸ | | 557,250.00 |
| | | 3 | ԱՁ Դավիթ Հովհաննիսյան Հովհաննեսի | | 700,000.00 |
| 3 | Ղեկավարի սեղան | 1 | **«Առկտուր» ՍՊԸ** | X | **135,000.00** |
| | | 2 | «Դամկար» ՍՊԸ | | 166,666.00 |
| 4 | Գրապահարան 1 | 1 | **«Դամկար» ՍՊԸ** | X | **570,000.00** |
| | | 2 | ԱՁ Դավիթ Հովհաննիսյան Հովհաննեսի | | 579,000.00 |
| | | 3 | «Ման Արթ» ՍՊԸ | | 943,000.00 |
| | | 4 | «Առկտուր» ՍՊԸ | | 1,039,875.00 |
| 5 | Գրապահարան 2 | 1 | **ԱՁ Դավիթ Հովհաննիսյան Հովհաննեսի** | X | **215,000.00** |
| | | 2 | «Դամկար» ՍՊԸ | | 220,000.00 |
| | | 3 | «Առկտուր» ՍՊԸ | | 334,300.00 |
| | | 4 | «Ման Արթ» ՍՊԸ | | 351,600.00 |
| 6 | Գրասենյակային աթոռ 1 | 1 | **«Դամկար» ՍՊԸ** | X | **345,000.00** |
| | | 2 | «Առկտուր» ՍՊԸ | | 350,000.00 |
| | | 3 | «Ատլանտ Էքստրա» ՍՊԸ | | 396,000.00 |
| 7 | Գրասենյակային աթոռ 2 | 1 | **«Դամկար» ՍՊԸ** | X | **350,000.00** |
| | | 2 | «Առկտուր» ՍՊԸ | | 487,500.00 |
| | | 3 | «Ատլանտ Էքստրա» ՍՊԸ | | 500,000.00 |
| 8 | Ղեկավարի բազկաթոռ | 1 | **«Ատլանտ Էքստրա» ՍՊԸ** | X | **237,500.00** |
| | | 2 | «Դամկար» ՍՊԸ | | 325,000.00 |

Կողմ՝ 3, դեմ՝ 0:

## 6. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԸՆՏՐՎԱԾ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Հանձնաժողովը որոշեց Ընթացակարգի յուրաքանչյուր չափաբաժնի մասով որպես ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցնող մասնակից հայտարարել 5-րդ կետով ներկայացված աղյուսակում նշված՝ հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցներին:

Կողմ՝ 3, դեմ՝ 0:

## 7. ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՔՍՏԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԱՆԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի քարտուղար Մ. Ղազարյանը Հանձնաժողովին ներկայացրեց պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստի նախագիծը: Հանձնաժողովը որոշեց.

1. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ սահմանել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

2. Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:

Կողմ՝ 3, դեմ՝ 0:

## 8. ԿԱՏԱՐՎԱԾ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ, ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐԻ, ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ և ՀՐԱՎԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՀԱԿԱՕՐԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը արձանագրեց, որ.

1. Ընթացակարգի հրավերում փոփոխություններ չեն կատարվել:

2. Գնման վերաբերյալ հարցումներ, պարզաբանումներ չեն եղել և հիմնավորումներ չեն պահանջվել:

3. Գնման գործընթացի շրջանակներում հակաօրինական գործողություններ չեն հայտնաբերվել:

4. Գնման գործընթացի վերաբերյալ ներկայացված բողոքներ չեն եղել և դրանց վերաբերյալ կայացված որոշումներ չեն ընդունվել:

Կողմ՝ 3, դեմ՝ 0:

## 9. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՋՈՐԴ ՆԻՍՏԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՕՐԸ, ԺԱՄԸ ԵՎ ՎԱՅՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը որոշեց.

1. Հաստատել Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը:

2. Ընթացակարգի Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամ և վայր սահմանել համապատասխանաբար՝ պայմանագիրը ստորագրելու օրվան հաջորդող կամ Ընթացակարգը չկայացած հայտարարվելու դեպքում՝ տվյալ օրվան հաջորդող աշխատանքային օրը, ժամը 09:15-ին, ՀՀ, ք. Երևան, Փ. Բուզանդի 1/3 հասցեում գտնվող «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի շենքում:

Կողմ՝ 3, դեմ՝ 0:

| | | |
|---|---|---|
| **Հանձնաժողովի՝** | | |
| **Նախագահ** | | Հ. Հովհաննիսյան |
| **Անդամներ** | | Ա. Աղաբեկյան |
| | | Ա. Սարգսյան |
| **Քարտուղար** | | Մ. Ղազարյան |